ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր՝ 28.08.2017թ. Ե-1/68 գրության, հայտնում եմ, որ նոր կոմունիկացիաներ անցկացնելուց կամ վթարավերականգնողական աշխատանքներից հետո մատակարար ընկերությունների կամ իրենց կապալառու կազմակերպությունների կողմից սահմանված ժամկետում քանդված տարածքները բերվում են նախնական տեսքի: Նմանատիպ աշխատանքները գտնվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի համապատասխան ծառայությունների ամենօրյա հսկողության ներքո, իսկ հայտնաբերված ասֆալտբետոնյա ծածկի թերությունները սեղմ ժամկետում վերացվում են ընկերությունների կողմից:

Ինչ վերաբերում է Չեխովի փողոցի հ.34 հասցեում առկա խրամուղու ասֆալտբետոնյա ծածկույթի նստվածքին՝ տեղեկացնում եմ, որ այդ տարածքում էլեկտրամատակարարման անցկացման նպատակով շինարարական աշխատանքներն իրականացվել են 2016թ., որից հետո կատարվել են նաև ասֆալտապատման աշխատանքները: Նշված հասցեի խրամուղու նստվածքի թերությունները վերացվել են «ՀԷՑ» ՓԲ ընկերության Կապալառուի կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ